ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարությունները,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 29-րդ հոդվածի վրա,

ձգտելով բարենպաստ պայմաններ ստեղծել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) արդյունավետ գործունեության համար,

հաստատելով իրենց հավատարմությունը «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» 1989 թվականի մարտի 22-ի Բազելյան կոնվենցիայով (այսուհետ՝ Բազելյան կոնվենցիա) նախատեսված միջազգային պարտավորությունների կատարման սկզբունքներին, որի մասնակից են Միության անդամ պետությունները (այսուհետ՝ անդամ պետություններ),

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրով կարգավորվում են անդամ պետությունների միջև փոխադարձ առևտուր իրականացնելիս Միության մաքսային տարածքով այն վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման հետ կապված հարաբերությունները, որոնք նշված են ապրանքների միասնական ցանկի 1.2-րդ և 2.3-րդ բաժիններում, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են «Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները (այսուհետ՝ թափոններ):

Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակներով գործածվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

պետական մարմիններ՝ անդամ պետությունների մարմիններ, որոնք իրականացնում են թափոնների անդրսահմանային տեղափոխման ժամանակ սույն Համաձայնագրով և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների կանխարգելման, հայտնաբերման և կանխման գործառույթներ,

եզրակացություն (թույլատրագիր)՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման իրավունքը հաստատող փաստաթուղթ,

դիմումատու՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար իրավասու մարմնին դիմում ներկայացրած իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ,

իրավասու մարմին՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված՝ անդամ պետության մարմին,

թափոնների անդրսահմանային տեղափոխում՝ Միության ապրանք հանդիսացող թափոնների արտահանում մի անդամ պետության տարածքից և դրանց ներմուծում մեկ այլ անդամ պետության տարածք, այդ թվում՝ երրորդ անդամ պետության տարածքով (ներքին տարանցում) և/կամ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով, ինչպես նաև թափոնների արտահանում մի անդամ պետության տարածքից և դրանց ներմուծում նույն անդամ պետության տարածք մեկ այլ անդամ պետության տարածքով:

Սույն Համաձայնագրում գործածվող այլ հասկացություններ կիրառվում են Բազելյան կոնվենցիային, «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին և Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է անդամ պետությունների միջև փոխադարձ առևտուր իրականացնելիս թափոնների անդրսահմանային տեղափոխում իրականացնող իրավաբանական անձանց կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց վրա:

Թափոնների անդրսահմանային տեղափոխումը ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար արգելվում է:

Հոդված 4

Թափոնների անդրսահմանային տեղափոխումը մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով իրականացվում է Բազելյան կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

Հոդված 5

Անդամ պետություններում հսկողություն և վերահսկողություն է իրականացվում թափոնների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ՝ անդամ պետությունների օրենսդրության համապատասխան:

Անդամ պետություններում չի թույլատրվում թափոնների անդրսահմանային տեղափոխումը դրանց թաղման և (կամ) վնասազերծման նպատակով:

Հոդված 6

Թափոնների անդրսահմանային տեղափոխումն իրականացվում է եզրակացության (թույլատրագրի) հիման վրա, որն իրավասու մարմինը տրամադրում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական ձևով:

Եզրակացությունը (թույլատրագիրը) դիմումատուին տրամադրվում է անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Թափոնների արտահանման եզրակացությունը (թույլատրագիրը)

տրամադրվում է այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որի տարածքից նախատեսվում է դրանք արտահանել՝ այդ թափոնների ներմուծման եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում, որը տրամադրվել է այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որի տարածք նախատեսվում է դրանք ներմուծել:

Թափոնների արտահանման եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը ներքին տարանցման դեպքում իրականացվում է սույն հոդվածի երրորդ պարբերության մեջ նշված՝ դրանց ներմուծման եզրակացության (թույլատրագրի) և այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից տրամադրված ներքին տարանցման եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում, որի տարածքով նախատեսվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը:

Մի անդամ պետության տարածքից նույն անդամ պետության տարածք այլ անդամ պետության տարածքով թափոնների անդրսահմանային տեղափոխման ժամանակ եզրակացության (թույլատրագրի) տրամադրումն իրականացվում է այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որի տարածքով տեղափոխվում են թափոնները, այն անդամ պետության իրավասու մարմնից, Բազելյան կոնվենցիային համապատասխան, ծանուցումն ստանալուց հետո, որի տարածքից և որի տարածք նախատեսվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը:

Եզրակացությունների (թույլատրագրերի) պատճենները կցվում են ապրանքաուղեկից փաստաթղթերի լրակազմին:

Հոդված 7

Այն անդամ պետության պետական մարմինները, որի տարածք իրականացվել է թափոնների ներմուծումը, և (կամ) այն անդամ պետության պետական մարմինները, որի տարածքով իրականացվել է թափոնների անդրսահմանային տեղափոխումը, առանց եզրակացությունների (թույլատրագրերի)՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման փաստերի հայտնաբերման դեպքում, ինչպես նաև եզրակացություններում

(թույլատրագրերում) նշված տեղեկությունների՝ այն տեղեկությունների հետ անհամապատասխանության դեպքում, որոնք ստացվել են թափոնների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացման ընթացքում, իրենց պետության իրավասու մարմնի միջոցով այդ փաստերի հայտնաբերման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածքից իրականացվել է թափոնների արտահանումը:

Հոդված 8

Այն անդամ պետության իրավասու մարմինը, որի տարածքից իրականացվել է թափոնների արտահանումը, սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվությունը ստանալու դեպքում՝

առանց եզրակացության (թույլատրագրի)՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման դեպքում միջոցներ է ձեռնարկում, Բազելյան կոնվենցիայի նորմերին համապատասխան, թափոնները վերադարձնելու կամ էկոլոգիապես հիմնավորված եղանակով դրանք հեռացնելու ուղղությամբ,

թափոնների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու ժամանակ ստացված տեղեկությունների հետ եզրակացության (թույլատրագրի) մեջ նշված տեղեկությունների անհամապատասխանության դեպքում՝

որոշում է ընդունում եզրակացության (թույլատրագրի) գործողության դադարեցման մասին և այդ որոշումն ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է այն դիմումատուին, որին տրամադրվել էր եզրակացությունը (թույլատրագիրը), այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածք իրականացվել է (նախատեսվել է) թափոնների ներմուծումը, և այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածքով իրականացվել է թափոնների անդրսահմանային տեղափոխումը (ինչը հիմք է հանդիսանում նշված իրավասու մարմինների կողմից դիմումատուին տրամադրված եզրակացությունները (թույլատրագրերը) չեղյալ ճանաչելու

համար),

միջոցներ է ձեռնարկում, Բազելյան կոնվենցիայի նորմերին համապատասխան, թափոնները վերադարձնելու կամ դրանք էկոլոգիապես հիմնավորված եղանակով հեռացնելու ուղղությամբ:

Հոդված 9

Թափոնների անդրսահմանային տեղափոխման կարգին ներկայացվող՝ սույն Համաձայնագրում չնշված պահանջները, ինչպես նաև փոխադրողին և վթարային իրավիճակների կանխարգելման ու վերացման, մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման նպատակով միջոցառումների իրականացման կարգին ներկայացվող պահանջները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 10

Սույն Համաձայնագրով և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման հետ կապված պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է պատասխանատվություն՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11

Այն անդամ պետության իրավասու մարմինը, որի տարածքից իրականացվել է թափոնների արտահանումը, յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 20-ը, սույն Համաձայնագրի հավելվածի համաձայն սահմանված ձևով (էլեկտրոնային փոստով) համապատասխան ժամանակաշրջանում տրամադրված՝ թափոնների արտահանման եզրակացությունների (թույլատրագրերի) վերաբերյալ հաշվետվություն է ուղարկում այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածք ներմուծվել են թափոնները:

Հոդված 12

Անդամ պետությունների կառավարությունները միմյանց և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնում են իրենց պետությունների իրավասու մարմինների մասին:

Իրավասու մարմինների փոփոխության դեպքում անդամ պետությունների կառավարությունները 30 օրացուցային օրվա ընթացքում դիվանագիտական ուղիներով այդ մասին ծանուցում են միմյանց և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին:

Հոդված 13

Սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և կազմում է Միության իրավունքի մաս:

Հոդված 15

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 16-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Կատարված է Չոլպոն Ատա քաղաքում 2019 թվականի օգոստոսի 9-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից՝**	**Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝**

ՀԱՎԵԼՎԱԾ

«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» համաձայնագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման (արտահանման) եզրակացությունների (թույլատրագրերի) մասին, որոնք տրամադրվել են 20 ___ թվականի համար

Համարը ը/կ	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Վտանգավոր թափոնների անվանումը	Վտանգավոր թափոնների ծավալը (տոննաներով)	Արտահանման պետությունը	Ներքին տարանցման պետությունը (պետությունները)	Ներմուծման պետությունը	Դիմումատուի անվանումը	Ներմուծման պետությունում դիմումատուի կոնտրագենտի անվանումը	Տրանսպորտի տեսակը	Եզրակացության (թույլատրագրի) համարը և ամսաթիվը	Եզրակացության (թույլատրագրի) գործողության ժամանակահատվածը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի օգոստոսի 9-ին Չոլպոն Ատայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն